

12. Ազապի (սիրոյ հաս) սեղաններուն աւանդութիւնը. — Երուսաղէմի բիւզանդական տիրապետութեան շրջանի շինութեանց արդիւնք ըլլալով՝ Սիոնի լեռան պեղումներէն գտնուած են «ձեւաւոր սեղաններ՝ որ վերջին Ընթրեաց և քրիստոնէական Ազապներու համար շատ կանուխէն շինուած են: Այս ձեւով սեղաններ շարունակուած են գործածելի ըլլալ մէկ քանի վանքերու սեղանատուններու մէջ (Աթոս լեռան վանքը և Ատտիկէի մէջ Daou Mendoli), վանականները իւրաքանչիւր սեղանի մօտ կը նստէին տասն և երեք անձերով, վեց մէկ կողմն, վեց միւս կողմն, մէկն ալ սեղանին դուռիսը: Այս սեղանները կանոնաւոր զիծով մը կը վերջանան: Այս ձեւով սեղաններ կը գտնուին նաև քրիստոնէայ և իսլամ տապանաքարերու մէջ, պակաս չեն յնգիպոս և այլուր: Ինչ ալ ըլլայ այս սեղաններուն ձեւը՝ առնուած կը թուի Եգիպտոսի Նուիրական Սեղաններուն ձեւէն: Անտարակոյս անոնք կը ծառայէին գործնական նպատակի մը, շինուած ըլլալով այնպէս որ դիւրութիւն տան մէկ կողմն պարպելու կերակուրի փշրանքները» (*) (P. E. F. 1927, էջ 94):

Ե. Յ Ո Վ Ս Ա Փ Ա Տ Ի Ջ Ո Ր Ը

Արեւելեան գուռը՝ միակը որ այսօր կը բացուի Կեդրոնի Ջորին վրայ, ԺԴ. դարէն սկսեալ ուխտա-

(*) Ազապի համար իւրաքանչիւր սեղանի զօրծածութեան մասին տեսնել (Murko, W. U. S. II. էջ 109 ff.):